«ԷԿՈԼՈԳԻԱ» ԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ

«Էկոլոգիա» *գիտության կողմից ուսումնասիրված հարցերի առաջին հիշատակումները կարելի է գտնել հին հույն գիտնականների և փիլիսոփաների աշխատություններում:* **Արիստոտելը** *(Ք.ա. 384 – 322 մ.թ.ա.) իր «Կենդանիների պատմություն» աշխատության մեջ նկարագրել է իրեն հայտնի ավելի քան 500 կենդանիների, և ուսումնասիրել նրանց:* **Թեոֆրաստ Էրեսիացին** *(Ք.ա. 371 – 280 թթ.) նկարագրել է հողի և կլիմայի ազդեցությունը բույսերի համայնքների կառուցվածքի վրա:* **Պլինիոս Ավագը** *(մ.թ. 23 – 79) իր 37 հատորանոց «Բնական պատմություն» աշխատությունում մանրամասն նկարագրել է կենդանիների և բույսերի տարբեր տեսակներ՝ ընդգծելով բնակավայրի դերը որոշակի օրգանիզմի ձևավորման գործում:*

Էկոլոգիայի զարգացման երկրորդ փուլը նրա ձևավորումն է որպես ինքնուրույն գիտություն: Այն սկսվում է XIX– րդ դարի 60–ականների երկրորդ կեսից և շարունակվում է մինչև XX դարի 50–ական թթ. 1866 թվականին գերմանացի կենսաբան **Էռնստ Հեկելը** *(1834 – 1919) առաջարկել է առանձնացնել էկոլոգիան որպես անկախ գիտություն:* **Չարլզ Դարվինը** *(1809 – 1882) հայտնաբերել է օրգանական աշխարհի էվոլյուցիայի հիմնական գործոնները: 1935 թվականին անգլիացի բուսաբան և էկոլոգ* **Արթուր Թանսլին** *(1871 – 1955) առաջարկել է «էկոհամակարգ» տերմինը, որը նշանակում է տվյալ բիոտոպում ապրող օրգանիզմների ամբողջությունը, որը, նրա կարծիքով, հենց համակարգ է իր բաղկացուցիչ տարրերով, մեկ միասնական պատմությամբ և համակարգված զարգացման ռնակությամբ:*

Էկոլոգիայի զարգացման երրորդ փուլը սկսվել է XX դարի 50–ական թվականներին և շարունակվում է մինչ օրս: Ամերիկացի էկոլոգ **Յուջին Օդումը** *էկոլոգիան անվանել է բնության կառուցվածքի և գործառույթների գիտություն (1975):*

Ներկայումս էկոլոգիան սերտորեն կապված է այնպիսի գիտություններ–ի հետ, ինչպիսիք են կենսաբանությունը, աշխարհագրությունը, երկրա–բանությունը, քիմիան, ֆիզիկան, մաթեմատիկան, տնտեսագիտությունը, բժշկությունը, սոցիոլոգիան և մի շարք այլ գիտության ճյուղեր: